ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2022Թ. 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարգելի ավագանու անդամներ Ձեզ է ներկայացվում Մասիս Համայնքի 2022թվականի բյուջեի 1-ին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին հաղորդումը:

Եկամուտներ

Մասիս համայնքի 2022թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 3 366 825 450 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 1 448 391 127 դրամ, կամ 1-ին կիսամյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 43%-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 548 220 050 դրամի դիմաց կատարվել է 540 397 227 դրամ կամ կատարվել է 34.9%-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 095 844 970 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 352 309 310 դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 32.1%-ով, այդ թվում հողի հարկի առաջադրանքը կատարվել է 25%-ով, գույքահարկինը՝ 77.4 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 33.8%-ով, տեղական տուրքերը՝ 74.3%-ով, պետական տուրքերը՝ 57.3 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 59 453 000 դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 44 170 094 դրամ,

Պետական տուրքերի առաջադրանքը՝ նախատեսված 18 000 000 դրամի դիմաց փաստացի կազմել 10 321 600 դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 907 194 300 դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 456 373 080 դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել է 188 887 517 դրամ,կամ կատարվել է 41.4%-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 30%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 40.1%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 799 600 դրամ:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 345 593 070 դրամի դիմաց գանձումները կազմել է 141 150 620 դրամ կամ կատարվել է 40.8%, որից աղբահանության վճարների մասով 160 255 000 դրամի դիմաց գանձվել է 67 309 728 դրամ կամ կատարվել է 42%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 39.1 %-ով, երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով՝ 48 %-ով:

Ծախսեր

2022 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին եռամսյակի ծախսերը կատարվել է 32.3 %-ով՝ 3 366 825 450 դրամ առաջադրանքից կատարվել է 1 087 962 408 դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 32 %-ով:

Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 21.3 %-ով:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի ծախսերը կատարվել է 41 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 48.3 %-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով նախատեսված ծախսերը կատարվել է 36.1 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 42.5 %-ով:

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսված ծախսերը կատարվել է 49 %-ով:

Մասիս համայնքի 2022թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3 346 748 900 դրամի դիմաց կատարվել է 1 777 304 740 դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝

կազմել է 1 336 954 200 դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 344 333 950 Դրամ, ստացված կապիտալ սուբվենցիա՝ 96 016 590 դրամ:

2022 թ. բյուջեի Ֆոնդային մասի ծախսերը կազմել է 618 331 282 դրամ, որից կապիտալ ծախսերը ըստ ոլորտների կազմել է՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 14 976 458 դրամ,

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում 346 078 877 դրամ,

գ/ Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության ոլորտում 74 172 455 դրամ,

դ/ Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգման ոլորտում 56 538 689 դրամ,

ե/ Կրթության ոլորտում 126 564 803 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ն.ՍԱՀԱԿՅԱՆ